



[Handwritten signature]

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«12» 05 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 059 - 26

Նախաձեռնող՝

«ԴԱՇՏԵՆԵՐԳՈ» ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտաս փ. 15/7

Գործունեությունը՝

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում

Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Դաշտադեմ բնակավայր 10-րդ փ. 11 հողամաս

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 059 - 26

«12» Տպիսի 2026թ.

Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրում 10,5ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանից 6,65ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԴԱՇՏԷՆԵՐԳՈ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Թալին համայնք, Դաշտադեմ բնակավայր, 10-րդ փողոց, 11 հողամաս

Ներածական մաս. «Դաշտէներգո» ՍՊԸ-ն նախատեսում է Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի 10-րդ փողոց, 11 հողամաս հասցեում կառուցել արևային ֆոտովոլտային էլեկտրակայան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ընկերությանը Էներգիաարտադրության լիցենզիան տրամադրվել է 10.5 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի համար, որի կառուցումն իրականացվելու է փուլերով: Փորձաքննական նախագծով ներկայացվում է միայն 6,65 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ՇՄԱԳ հաշվետվության առաջին մասը: Արևային էլեկտրակայանի մնացած հզորության, ինչպես նաև համապատասխան օդային զծի կառուցման նախագծերը կներկայացվեն առանձին՝ համապատասխան ՇՄԱԳ հաշվետվություններով: Վերջիններս, սահմանային ցուցանիշներին համապատասխան, ևս ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների և հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել՝

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 30012023-02-0044 /ծածկագիրը՝ 02-035-0127-0018 /, Թալին համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծման թույլտվությունը՝ N ՆԹ-1284-26, տրված՝ 10.02.2026թ.:



Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականների՝ հողամասի հողի նպատակային նշանակությունն է էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի:

Նկարագրական մաս. «Դաշտէներգո» ՍՊԸ-ն էլեկտրաէներգիայի արտադրության համար նախատեսում է կառուցել 6.65 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայա Դաշտադեմ բնակավայրի վարչական տարածքում՝ 10-րդ փողոց, 11 հողամաս հասցեի 9,5 հա տարածքում: Գործունեության տարածքի հեռավորությունը միջպետական ճանապարհից կազմում է 1070մ, տեղական նշանակության ավտոճանապարհից՝ 710 մ, Դաշտադեմ բնակավայրի ամենամոտ բնակելի տնից՝ մոտ 1240մ, մոտակա ջրային ռեսուրսներից՝ Մարգարաձոր գետից ամենամոտ հեռավորությունը 910մ և մշտական հոսք չունեցող սելավատարից 290մ: Տարածքին մոտ 860մ հեռավորության վրա գտնվում է գործող այլ արևակայան: Նախատեսվում է տեղադրել՝ 13,579 հատ ֆոտովոլտային մոդուլներ, յուրաքանչյուր մոդուլի հզորություն՝ 640 Վտ, մոդել՝ EG-640NT78-HL/BF-DG, ՕԳԳ՝ 22.9%, պաշտպանվածություն՝ IP68, մոդուլի չափսեր՝ 2465x1134x30 մմ:

Փոխակերպիչները՝արտադրող՝ Ginlong (Solis), մոդել՝ Solis-S6-GU350K, տեսակ՝ ցանցային, քանակ՝ 19 հատ, յուրաքանչյուրի հզորություն՝ 350 կՎտ: Արևային կայանի տարածքում նախատեսվում է կառուցել 9. 35/2x0.8ԿՎ լարմամբ, 9100 ԿՎԱ հզորության ենթակայան, որի համար նախատեսվում են միաձույլ երկաթբետոնե հիմքեր՝ 6.56 x 2.93 մ չափսերով, բետոն՝ B20, հիմքերի տեղադրման խորություն՝ -1.20 մ, ջրամեկուսացում՝ բիտումային մածիկով:

Նախատեսվող ենթակայանի չափսեր՝ 6.058 x 2.896 x 2.438 մ, նախատեսվում է տեղադրել յուղային մեկ տրանսֆորմատոր, 7,5մ3 յուղի տարողությամբ:

Տրանսֆորմատորի 35կՎ ԲԼ կողմում տեղադրվում է լրակազմ բաշխիչ սարքավորում, իսկ ՅԼ կողմում տեղադրվում է օդային երկու անջատիչներ, որոնք միանում են երկու առանձին սեկցիաներին: Յուրաքանչյուր սեկցիային միանում են 8-ական ինվերտերներ, ինչպես նաև սեփական կարիքների համար նախատեսված ավտոմատները: Հողանցումը նախատեսվում է կատարել շերտապողպատից 40x4մմ չափերով: տարածքում նախատեսվում են տեղադրել հրդեհաշիջման վահանակներ և կրակմարիչներ: Ենթակայանի տարածքում նախատեսվում է հակահրդեհային, ծխի և ջերմաստիճանի տվիչների տեղադրում:

Արևակայանի շինարարության և շահագործման փուլերում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է շտերով՝ ըստ պահանջի: Աշխատողներն օգտվելու են շարժական բիոզուգարանից, որի սպասարկմամբ զբաղվելու է համապատասխան կազմակերպությունը: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:



- կենսաբազմազանության պահպանման,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման և արագ արձագանքման համար:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «Դաշտէներգո» ՍՊԸ-ի կողմից նախատեսված արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման վերաբերյալ հանրային լսումներն իրականացվել են Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Ընկերությունը կատարել է տարածքի հնագիտական ուսումնասիրության աշխատանքներ հնագիտության և ազգագրության ինստիտուտի մասնագետների հետ համատեղ՝ հնարավոր նորահայտ պատմա-մշակութային միավորների բացահայտման և տեղայնացման համար: ԿԳՄՍ լիազոր մարմնի կողմից նշված հարցի կապակցությամբ տրվել է համաձայնություն՝ արևակայան կառուցելու նպատակով հողամասի օգտագործման համար՝ պայմանով, որ ծրագիրն իրականացնող կազմակերպությունը ապահովի տեղում առկա պատաշարերի և կառույցների մնացորդների պատմամշակութային ամբողջականության պահպանումը՝ համապատասխանեցնելով արևային վահանակների և այլ կոնստրուկտիվ տարրերի տեղադրումը դրանց առկա վիճակին: Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում հնարավոր վտանգավոր թափոնների առաջացմամբ, կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ծրագիրը կնպաստի վերականգնվող էներգետիկայի զարգացմանը, էներգետիկ համակարգի կայունությանը, ինչպես նաև կունենա դրական տնտեսական և բնապահպանական ազդեցություն:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Արևակայանի, ենթակայանի, էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների ապահովումը նախատեսել Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N523-Ն որոշման պահանջներին համաձայն: Արևակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:
2. Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառումը իրականացնել անվտանգության առաջին և երկրորդ սանիտարական գոտիների ապահովմամբ:
3. Բացառել կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտումը և տարածումը:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի և 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
5. Հնագիտական շերտեր պարունակող տարածքներում աշխատանքներն իրականացնել հնագետի հսկողությամբ ապահովելով տեղում պահպանված մշակութային լանդշաֆտի



անխաթարությունը՝ հաշվի առնելով շրջակայքում տեսանելի պատմամշակութային միավորների առկայությունը և վերջիններիս բավական մեծ խտությունը: Խստիվ պահպանել ծրագրի իրականացման սահմանները, հարևան հատվածներում միջամտություններ չկատարել և հեռացված հողային զանգվածներ չկուտակել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արագածոտնի մարզի Թալին համայնքի Դաշտադեմ բնակավայրում 10,5ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանից 6,65ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Շիրինազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան